ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 04.02.2026 ԹՎԱԿԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԹԻՎ ԿԳ-25090 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ ԿԳ-25090-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ռոման Ահարոնյանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Մարինե Ֆարմանյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Արսեն Հարությունյանի, Էմին Բեգլարյանի և Ցոլակ Մարգարյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 04.02.2026 թվականի թիվ ԿԳ-25090-2-Ա որոշման (**այսուհետև՝ Որոշում**) դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ-հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետ Վ. Ավետիսյանը **(այսուհետև՝ Բողոքաբեր կամ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** խնդրել է փաստաբան Հովհաննես Խուդոյանի (արտոնագիր՝ 2040) **(այսուհետև՝ Փաստաբան)** նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Պալատի նախագահի 07.11.2025թ. թիվ 317-Ա/ԿԳ-25090 որոշմամբ փաստաբան Հովհաննես Խուդոյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետև նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև նաև՝ Կանոնագիրք**) 2.2.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Գործի նախապատրաստման արդյունքում Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակիցը 07.01.2026թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի կարգապահական հանձնաժողովին (**այսուհետև նաև՝ Հանձնաժողով**) է հանձնվել 07.01.2026թ.:

Հանձնաժողովի 04.02.2026 թվականի թիվ ԿԳ-25090-2-Ա որոշմամբ կասեցվել է Հովհաննես Խուդոյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25090 կարգապահական վարույթը՝ մինչև թիվ 58207025 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:

Բողոքաբերը բողոք է ներկայացրել Որոշման դեմ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**), որը Պալատում մուտքագրվել է 27.03.2026 թվականին:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման էությունը</u>**.

Որոշմամբ նշվել է հետևյալը.

(…) Թիվ 58207025 քրեական գործը քննվում է դատական կարգով:

Թիվ 58207025 քրեական գործով կայացվելիք դատական ակտով կարող են բարձրացվել այնպիսի հարցեր և/կամ հաստատվել այնպիսի փաստեր, որոնք էական նշանակություն կարող են ունենալ կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.01.2023թ. թիվ 1/21-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգի (այսուհետ՝ Կարգ) 54.1. կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կարգապահական վարույթի կողմի առաջարկով, կարող է որոշում կայացնել կարգապահական վարույթը կասեցնելու մասին, եթե՝ անհնարին է տվյալ կարգապահական գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, բացառությամբ, երբ վիճարկվում է կարգապահական վարույթ հարուցելու մասին Փաստաբանների պալատի նախագահի որոշումը:

Նկատի ունենալով այն, որ թիվ 58207025 քրեական գործով դատարանի որոշմամբ կարող են բարձրացվել այնպիսի հարցեր և/կամ հաստատվել այնպիսի փաստեր, որոնք էական նշանակություն կարող են ունենալ սույն կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա ու առնչվել սույն վարույթով քննարկվող գործողություններին ու դեպքերին՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ կարգապահական գործի քննությունը մինչև թիվ 58207025 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը (…):

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Բողոքաբերը նշել է, Կոմիտեի նախագահի հրապարակային ելույթը «սուտ» որակելու և իր ենթադրությունների ուժով պաշտոնատար անձի հայտարարություններն այսուհետ «ստելու կանխավարկածի դիտանկյունից գնահատելու» և Կոմիտեի նախագահին «ստախոս» անվանելու վերաբերյալ հրապարակման համար հարուցված կարգապահական վարույթի շարունակության համար դատաքննության փուլում գտնվող մեկ այլ քրեական վարույթի կայացվող դատական ակտը չի կարող որևէ էական նշանակություն ունենալ, քանզի կայացվող դատական ակտով իրավական գնահատական է տրվելու որոշակի անձի կամ անձանց արարքներին, այլ ոչ թե որպես փաստաբան Հ. Խուդոյանի դրսևորած փաստաբանի ոչ հարիր վարքագծին, մասնավորապես՝ նրա կողմից հնչեցված վիրավորական բնույթի հրապարակային

արտահայտություններին, ուստի կայացվող դատական գործի ելքը, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի դատական ակտ կկայացնի դատարանը՝ մեղադրական, թե արդարացնող, չի կարող էական նշանակություն ունենալ հարուցված կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա այն պարզ տրամաբանությամբ, որ դրանով Հ. Խուդոյանի դրսևորած վարքագծին չի կարող տրվել որևէ գնահատական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքաբերը գտել է, որ կայացված որոշումն անհիմն է, չպատճառաբանված, մասնավորապես՝ վկայակոչված չէ որևէ այնպիսի հանգամանք կամ փաստական տվալ, որի առկայությունը թույլ է տալիս ենթադրելու, որ թիվ 58207025 քրեական վարույթով կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ կարգապահական վարույթի ընթացքի համար, մասնավորապես որոշման պատճառաբանական մասը բաղկացած է մեկ նախադասությունից, որում նշված է՝ *«...թիվ 58207025 քրեական վարույթով դատարանի որոշմամբ կարող են բարձրացվել այնպիսի հարցեր կամ հաստատվել փաստեր, որոնք էական նշանակություն կարող են ունենալ կարգապահական վարույթի հետագա ընթացքի վրա և առնչվել սույն վարույթով քննարկվող գործողություններին և դեպքերի...»*, մինչդեռ որոշմամբ առնվազն նշված չէ հարցերի նվազագույն շրջանակ՝ դատական գործի ընթացքի և փաստական հանգամանքների նույնության կամ քրեական վարույթի ազդեցության վերաբերյալ կարգապահական վարույթի հետագա ընթացքի մասով, ուստի բողոքարկվող որոշման պատճառաբանական մասը խիստ վերացական է և անորոշ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Բողոքաբերը նշել է, որ հարուցված կարգապահական վարույթի քննության առարկան տվյալ դեպքում Հ. Խուդոյանի կողմից հնչեցված վիրավորական բնույթի արտահայտությունները և դրսևորած վարքագիծն է, այլ ոչ թե թիվ 58207025 քրեական վարույթի փաստական հանգամանքները, որոնց գնահատման արդյունքում տրված իրավական գնահատականները բոլոր պարագաներում չեն կարող առնչվել կարգապահական վարույթի քննության առարկային:

Արդյունքում Բողոքաբերը խնդրել է վերացնել Որոշումը և վերսկսել վարույթը:

4. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստերը՝

1. Դիմումի համաձայն՝ 30.09.2025 թվականին «yerkir.am» լրատվական կայքում զետեղվել է փաստաբան Հովհաննես Վլադիմիր Խուդոյանի հրապարակումը, որում վերջինս անդրադարձել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանի հարցազրույցին: Մասնավորապես, փաստաբանի հրապարակմամբ նշվել է.

«Քննչական կոմիտեի ղեկավարը երեկ լուրջ ու պատասխանատու դեմքով ի թիվս այլնի պնդում էր, որ սպանության գործով քաղաքական բան չկա:

Բացի անուղղակի քաղաքական ազդեցությունը, ուղղակի քաղաքական միջամտության մասին տվյալներ այս պահին չունեմ: Բայց խնդիրն այլ է:

Նույն անձը երկու ամիս առաջ նույն դեմքով 18 արդարների գործով պնդում էր, որ պլանավորվել է մարդ գնդակահարել:

Իսկ հետո, երբ պարզվեց ու ապացուցվեց, որ հանրայինի եթերից ***ուղղակի ստել է****, նույնիսկ ներողություն չի խնդրել հանրությանը մոլորեցնելու համար:*

Փաստի ուժով Արթուր Պողոսյանի հայտարարությունների նկատմամբ տարածվում է ստելու կանխավարկածը:»:

2. Հանձնաժողովի 04.02.2026 թվականի թիվ ԿԳ-25090-2-Ա որոշմամբ՝ կասեցվել է Հովհաննես Խուդոյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25090 կարգապահական վարույթը՝ մինչև թիվ 58207025 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը:

5. **<u>Պալատի խորհրդի որոշման պատճառաբանական մասը</u>**.

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, բողոքարկվող որոշումը և կարգապահական վարույթի նյութերը, գտնում է, որ սույն դեպքում առկա են բողոքը բավարարելու և կարգապահական վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացնելու բավարար հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն կարգապահական վարույթի քննարկման հարցը Փաստաբանի կողմից հրապարակային հարթակում կատարված գրառումն է, մասնավորապես՝ Փաստաբանի կողմից հրապարակային գրառման մեջ օգտագործվել են «սուտ» և «ստելու կանխավարկածը» ձևակերպումները՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրապարակային հայտարարությունների առնչությամբ: Հետևաբար, սույն վարույթով ենթակա են գնահատման այդ արտահայտությունների բովանդակությունը, դրանց կատարման համատեքստը, դրանց հիմքում ընկած փաստական տվյալների առկայությունը, ինչպես նաև այն հարցը, թե արդյոք դրանք տեղավորվում են փաստաբանի մասնագիտական խոսքի ազատության սահմաններում, թե դուրս են գալիս մասնագիտական վարքագծի թույլատրելի շրջանակներից:

Խորհուրդը հաշվի է առնում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Morice v. France գործով ձևավորված մոտեցումները, որոնց համաձայն՝ փաստաբանի խոսքի ազատությունը վայելում է բարձրացված պաշտպանություն, երբ նրա արտահայտությունները վերաբերում են արդարադատության իրականացմանը կամ պաշտոնատար անձանց գործունեությանը և ներկայացնում են հանրային հետաքրքրություն, սակայն նման արտահայտությունների գնահատումը կատարվում է՝ հաշվի առնելով դրանց ընդհանուր համատեքստը, օգտագործված ձևակերպումների բնույթը և այն հանգամանքը, թե արդյոք դրանք ունեցել են բավարար փաստական հիմք: Այսինքն՝ նման դեպքերում կարգապահական մարմնի խնդիրն է ինքնուրույն գնահատել տվյալ հրապարակային արտահայտությունների բնույթը և դրանց համապատասխանությունը փաստաբանի վարքագծի չափանիշներին:

Այս համատեքստում Խորհուրդը գտնում է, որ թիվ 58207025 քրեական վարույթով կայացվելիք դատական ակտը, թեև կարող է վերաբերել սույն վարույթին առնչվող որոշ հանգամանքների, սակայն չունի այնպիսի նշանակություն, որը կբացառեր կարգապահական վարույթի շարունակությունն ու քննությունը մինչև այդ վարույթով վերջնական ակտի կայացումը: Նշված քրեական վարույթով դատարանը պետք է գնահատի որոշակի անձի կամ անձանց արարքների քրեաիրավական և դատավարական կողմերը, մինչդեռ սույն կարգապահական վարույթով քննարկման

առարկան Փաստաբանի կողմից հրապարակային արտահայտությունների դրսևորումն է և դրանց համապատասխանությունը փաստաբանի մասնագիտական վարքագծի պահանջներին:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով քննարկվող հարցերը հնարավոր է գնահատել կարգապահական վարույթի շրջանակում՝ վարույթի նյութերի, կողմերի բացատրությունների, և դրանց ընդհանուր համատեքստի շրջանակներում: Նշված տվյալներն իրենց բնույթով թույլ են տալիս վարույթի շրջանակում քննարկել և գնահատել՝ Փաստաբանի կողմից արված հրապարակային արտահայտությունները որքանով էին պայմանավորված քրեական գործի փաստական հանգամանքներով և որքանով էին տեղավորվում մասնագիտական քննադատության թույլատրելի սահմաններում:

Նման պայմաններում Խորհուրդը գալիս է այն հետևության, որ վարույթի կասեցումն ենթակա է վերացման, իսկ կարգապահական վարույթը՝ վերսկսման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-**րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի,** 39.4-**րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և** 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 2-**րդ կետի պահանջներով**

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ-հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետ Վ. Ավետիսյանի 27.03.2026 թվականի բողոքը բավարարել:

2. Վերացնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի՝ «Հովհաննես Խուդոյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25090 կարգապահական վարույթը կասեցնելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25090-2-Ա կարգապահական գործով 04.02.2026թ. որոշումը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ռոման Ահարոնյան**

27 ապրիլի 2026թ.
թիվ ԿԳ/07-Ա
ք. Երևան